ԿՅՈՒՐԻԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Պատմ. գիտ. թեկնածու Ռ. Ի. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

X—XI դդ. Բագրատունյաց թագավորության ֆեոդալական կազմավորումներից էր Կյուրիկյան կամ Լոռվա թագավորությունը, որը զգալի գեր է կատարել Հայաստանի հյուսիսային շրջանի քաղաքական-մշակութային կյանքում։ Նշված դարերում նրա տարածքը կազմող Տաշիր-Զորագետը եղել է հայ հոգևոր և նյութական մշակույթի գլխավոր կենտրոններից մեկը։ Որպես Բագրատունյաց կրտսեր ճյուղի՝ Կյուրիկյանների տիրույթ, այս կազմավորումը սերտորեն կապված էր Բագրատունիների հայոց թագավորության հետ և հայկական մյուս գավառական թագավորությունների համեմատությամբ ուներ որոշակի առանձնահատկություններ։

Կյուրիկյան թագավորության սկզբնավորման տարեթվի հարցը պատմագրության մեջ արծարծվել է շատ վաղուց, սակայն անհրաժեշտ տվյալների սակավությունը դժվարացրել է նրա լուծումը, իսկ հետազոտողների կողմից սկզբնաղբյուրների տեղեկությունների յուրովի մեկնաբանումը առաջ է բերել շփոթ։

Մեզ զբաղեցնող հարցին վերաբերող հիմնական սկզբնաղբյուրներից է XIII դարի պատմիչ Վարդան Արևելցու աշխատությունը։ Վերջինիս հաղորդումը հիմք է ծառայել Մ. Չամչյանին՝ թագավորության հիմնադրման տարեթիվը համարելու 982 թ.[1]*։ Այդ տարեթիվը երկար ժամանակ կրկնվել է պատմագիտական աշխատություններում*[2]*։ Բայց աստիճանաբար գիտությանը հայտնի են դարձել և շրջանառության մեջ դրվել խնդրին վերաբերող նոր նյութեր, հատկապես այնպիսի կարևոր սկզբնաղբյուր, ինչպիսին է Սանահնի վանքի մատյանը («Քյոթուկ»), վիմական արձանագրություններ և այլն, որոնք հնարավոր դարձրին վերանայելու հարցը։ 1923 թ. լույս տեսավ Մխիթարյան միաբան Ղ. Մովսիսյանի փոքրածավալ մենագրությունը, որ Լոռվա թագավորության ամբողջական պատմության առաջին շարադրանքն է։ Օգտվելով վերոհիշյալ աղբյուրների ընձեռած նյութից, նա առաջադրեց նոր տարեթիվ՝ 980 թ.*[3]*։ Ղ. Մովսիսյանի աշխատությունը երկար ժամանակ բավարարում էր մասնագետներին։ Այժմ, սակայն, հեղինակի եզրակացությունների զգալի մասը վերանայման կարիք ունի։ Մասնավորապես դա վերաբերում է թագավորության կազմավորման նախադրյալներին և ժամանակին։*

---

1 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 851։

2 Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1967, էջ 591։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Բ, Երևան, 1960, էջ 47։

3 Ղ. Մովսիսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորների պատմությունը, Վիեննա, 1923, էջ 28։

Տաշիր-Զորագետի X—XIII դդ. պատմությանը նվիրված թեկնածուական դիսերտացիայում մենք փորձել ենք հիմնավորել նոր տարեթիվ՝ 972։ Երկրորդ անդամ առիթ ենք ունեցել անդրադառնալ այդ հարցին, երբ հետազոտել ենք հողատիրության առանձնահատկությունները հյուսիսային Հայաստանում X—XI դդ. և ճշտումներ կատարելով՝ Կյուրիկյանների գահակալության սկիզբը համարել ենք 969/970 թ.[4]։

Վերջերս նույն հարցի շուրջ դիտական մամուլում հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Ի. Ղարիբյանը։ Հեղինակը մանրամասն քննարկում և ժխտում է մեր առաջին հոդվածում արված եզրակացությունը[5] (երկրորդին նա ծանոթ չէ)։

Առաջին հոդվածում հարցին վերաբերող մեր գլխավոր աղբյուրներն էին պատմիչ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» և X դարի պատմա-հնագիտական հուշարձանները։ Մենք ուշադրություն էինք դարձրել, որ Ուռհայեցին 974 թ. հայոց թագավոր Աշոտ Ողորմածի (953—977) բանակում հիշատակում է «Աղվանից թագավոր» Գուրգենին[6], որը Լոռու առաջին թագավոր Գուրգենն է։ Այս հաղորդումից ինքնին հետևում է, որ վերջինս իշխել է 980/982 թ. ավելի վաղ։ Բայց ո՞ր թվականից։ Հարցը պարզելուն օգնում է Կյուրիկյան թագավորության ներքին կյանքի ուսումնասիրությունը։

Թագավորության կազմավորումը սերտորեն առնչվում է Կյուրիկյանների հոգևոր աթոռանիստ կենտրոնի՝ Սանահնի վանքի հիմնադրման հետ։ Վանքի մայր եկեղեցու՝ Ամենափրկչի կտիտորական քանդակները պատկերում են Լոռվա առաջին թագավոր Գուրգենին իր ավագ եղբոր՝ Սմբատի հետ (վերջինս դարձավ հայոց թագավոր 977—990 թթ.)։

Բարձրաքանդակների վերևում փորագրված է. «Կիւրիկէ թագաւոր, Սմբատ թագաւոր»[7]։ Եկեղեցու կառուցման տարիները հաշվելով 967—972 թթ., մենք եզրակացրել էինք, որ 972 թ. Գուրգենը (Կյուրիկեն) արդեն գահակալում էր Տաշիրում[8]։

Այս տեսակետը Ղարիբյանը չի ընդունում՝ հետևելով Մովսիսյանին։ Սանահնի վանքի գրառումների մատյանում վանքի առաջին դպիր-քարտուղար Սիմեոնը 972 թ. հիշատակարան է գրել։ Այնտեղ նա հիշատակում է Գուրգենին, բայց ոչ իբրև թագավոր[9]։ Ուրեմն, եզրակացրել է ժամանակին Մովսիսյանը (ապա նաև Ղարիբյանը), Գուրգենը 972 թ. դեռ թագավոր չէր[10]։ Բացատրելով այդ, մենք գրել ենք, որ Սիմեոնի լռությունը ոչինչ չի նշանակում, Գուրգենը կարող էր թագավորել հիշատակարանի գրության թվակա-

---

4 Տե՛ս «Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ», «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3 «Լոռվա թագավորության կազմավորման պատմությունից», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1976, № 3։

5 Ի. Ղարիբյան, Կյուրիկյան թագավորության հռչակման տարեթվի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 1։

6 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17։

7 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 98։

8 Հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 201—202։

9 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3031 («Քյոթուկ»), էջ 39։

10 Գ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 24։ Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 80։

նին, բայց գրվելուց որոշ ժամանակ անց[11]։ Առարկող կողմը ոչ մի բացատրություն չի տալիս, թե ինչու այդպես չէր կարող լինել։

«Սիմեոն գրիչը լռում է Գուրգենի թագավոր լինելու մասին,— գրում է Ղարիբյանը։— Երբ հիշատակարանը գրում էր, ապա հետևում է, որ Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ավարտի ժամանակ նույնպես Գուրգենը թագավոր չէր, քանի որ առանց եկեղեցու կառուցումը ավարտելու անհրա-



ժեշտություն չկար քարտուղար և առաջնորդ ընտրելու։ Հետևաբար բարձրաբանդակը կամ նրա վրա եղած արձանագրությունը ավելացվել է հետագայում, երբ հայտնի էր երկու եղբայրների թագավոր լինելը, մեկին՝ Սմբատին, որպես եկեղեցու կառուցման անմիջական ղեկավարի, մյուսին՝ Գուրգենին, տեղի թագավորի»[12]։ Բայց երբվանի՞ց պետք է համարել Սմբատի թագավորությունը։ Եթե հաշվենք 977-ից, երբ նա գահակալեց Անիում, ապա Սանահնի քանդակում Սմբատը պետք է պատկերվեր շահնշահի զգեստով՝ արաբական չալմայով և խալաթով, ինչպես 976—991 թթ. կառուցված Հաղբատի

11 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 200։

12 Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 81։

Ս. Նշանի քանդակում։ Բայց Սանահնում նրա տարազը տեղական է (տե՛ս լուսանկարը)։ Այդ հանգամանքը ճշտում է քանդակի ժամանակը։ Առաջին հոդվածում մենք արդեն խոսել ենք այդ մասին, բայց Ղարիբյանը լռության է մատնում մեր բացատրությունը։ Բացի այդ, Ամենափրկչի արևելյան ճակատի քարերի կանոնավոր շարվածքից երևում է, որ քանդակները պատրաստվել են եկեղեցու շինությանը զուգընթաց՝ երկթեքի ցածում քանդակների համար թողնված է եղել նախօրոք արված ուղղանկյուն խորշ, ուր ագուցվել է բարձրաքանդակը[13]։

Ի. Ղարիբյանը, վկայակոչելով Սիմեոնի գրությունը, բացատրում է, որ Սմբատը, մինչև Անիում գահին նստելը (այսինքն՝ մինչև 977 թ.), Աշոտ Ողորմածի կողմից նշանակված է եղել գահակից թագավոր՝ Գուգարքը կառավարելու համար[14]։ Դա միանգամայն ճիշտ եզրակացություն է։ Սիմեոնը գրում է. «...ի թագաւորութիւն Աշոտոյ և նորին որդւոյ Սմբատայ. քաջք եւ յաղթողք թագաւորք Հայոց»[15]։ Ուրեմն հիշատակարանի գրության ժամանակ՝ 972 թ. Սմբատը գահակից «հայոց թագավորի» իրավունքով կառավարել է Գուգարքը։

Այդ դեպքում ինչո՞ւ նրա թագավորական տիտղոսը հաստատող արձանագրությունն ու քանդակը պետք է ավելացվեին հետագայում։ Ընդ որում նրա գահակցությունը սկսվել է ավելի շուտ։ Կաթողիկոս Անանիա Մոկացու վկայությամբ Սմբատը «Հայոց թագավոր» տիտղոսը կրել է արդեն 958 թ.[16]։ Լինելով արքունիքի ներկայացուցիչ Տաշիրում՝ նա մասնակցել է Սանահնի վանքի՝ տեղական քաղաքական կազմավորման հոգևոր կենտրոնի հիմնադրմանը և կառուցմանը։ Այդ իրողությունն են արտահայտում արձանագրությունն ու կտիտորական քանդակը, որոնց առկայությունը 972-ին անկասկած է։

Նույն միջոցառմանը մասնակցել է նաև Գուրգենը. այդ վկայում է «Քյոթուկ» մատյանը (էջ 57) և այդ հանգամանքը նույնպես արտացոլված է քանդակում։ Ամենափրկչի կտիտորական զույգը գեղարվեստական ամբողջություն է։ Անհնարին է պատկերացնել, որ սկզբից քանդակվել է Սմբատի ֆիգուրը, իսկ Գուրգենինը ավելացվել է տարիներ անց։ Անտարակույս, ֆիգուրները քանդակվել են միաժամանակ ի պատիվ եկեղեցու կառուցողների, որոնք ձեռքերում պահում են մանրակերտը (մոդելը)։ Նույնը վերաբերում է նաև արձանագրությանը։ Այն եղբայրների թագավորությունն արտացոլող վիմական գրություն է։ 958—972 թթ. Սմբատի թագավորական տիտղոս կրելը կասկածից դուրս է։ Եթե Գուրգենի գահակալումը ավելի ուշ ընդունենք (ըստ Ղարիբյանի՝ 979-ից), ապա հերթականության համաձայն արձանագրությունում նախ պետք է գրվեր՝ «Սմբատ թագաւոր», իսկ 979-ին ավելացվեր՝ «Կիւրիկէ թագաւոր», այնինչ անունները նշված են հակառակ կարգով։ Հնարավոր չէ պատկերացնել, որ սկզբում (958—972 թթ.) գրվել է արձանագրության վերջնամասը, ապա տարիներ անց (979-ին) ավելացվել

13 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 201—202։

14 Ի. Ղ ա ր ի ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 78—79։

15 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 38։ Տե՛ս նաև՝ Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն, Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 1։

16 Տե՛ս «Արարատ», 1897, մարտ, էջ 144։

ակիզբը։ Անտարակուսելի է, որ արձանագրությունը գրվել է ամբողջությամբ, քանդակների հետ միասին, ավելի ճիշտ՝ երկուսն էլ եկեղեցու կառուցմանը զուգընթաց։

Սիմեոնի հիշատակարանի լռությունը բոլորովին չի հակասում այս եզրակացությանը։ Սկզբնաղբյուրը ինչ-ինչ պատճառներով կարող էր չարձանագրել որևէ փաստ, որը այսօր զբաղեցնում է մեզ։ Այդ չի նշանակում, թե փաստը տեղի չի ունեցել։ Չնայած Սիմեոնի լռությանը, Գուրգենը թագավորում էր Տաշիրում, ինչպես կտեսնենք, 972-ից ավելի շուտ։

Ղարիբյանը ժխտում է Գուրգենի գահակալումը հոր՝ Աշոտ Ողորմածի օրոք (իշխել է 953—977 թթ.) և իր առարկությունը հիմնավորում է մի քանի կետերից բաղկացած փաստարկումներով։

970-ական թթ. Գուրգենը «չէր կարող «թագաւոր Աղուանից» կոչվել, քանի որ նա իր գահակալության ընթացքում ոչ մի թիզ հող չի նվաճել Աղվանքի տերիտորիաներից (խոսքը «Հայկական Աղվանքի»՝ Ուտիքի մասին է—Ռ. Մ.)։ ...Այնպես որ, այս հարցում Մաթևոս Ուռհայեցին որոշակի շփոթության մեջ է»[17]։ Այս առարկությունը անտեղի է։ Գուրգենը երբեք (այլ ոչ միայն 970-ական թթ.) ոչ մի նվաճում չի կատարել։ Ուտիքի Տավուշ գավառում (ներկայիս Շամշադինի շրջան) Կյուրիկյանները XI դարում տիրացել էին մի քանի բերդերի, այդ պատճառով XII դարի պատմիչ Ուռհայեցին հետին կարգով նրանց անվանում է «Աղվանից թագավորներ»։ Ուռհայեցու համար դա ամբողջ դինաստիայի անունն է, այդ պատճառով նույնիսկ դինաստիայի աթոռանիստ Լոռի քաղաքը համարում է «Աղվանքում» (էջ 231), բայց այդ անվանակոչումը ճիշտ չէ Կյուրիկյանների նկատմամբ։ Այդ մասին մենք հանգամանորեն խոսել ենք առաջին հոդվածում (էջ 202—204)։ Գուրգենին, որպես դինաստիայի ներկայացուցչի, Ուռհայեցին ընդհանուր կարգով է նման հորջորջում տալիս, այստեղ կարևորը 972 թ. նրա թագավոր լինելու կամ չլինելու հարցն է, իսկ դրանում, ինչպես կտեսնենք, պատմիչն ամենևին էլ շփոթության մեջ չէ[18]։

«Թագաւորք վերջինք Բագրատունիք» վերնագիրը կրող ժամանակագրությունը, կազմված XII դարում, Գուրգենի մասին տալիս է հետևյալ տեղեկությունը. «... իսկ սոքա (Աշոտ III-ի որդիները) համակամ սիրով երիս բաժանեն զթագաւորութիւնն՝ հայրագլուխ առնելով զՍմբատ և Գուրգեն տիրէ Դուգարացւոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խառայ մինչև ի դուռն Տփղաց։ Եւ վարեաց սա զամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ... թագաւորեաց

17 Ռ. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 80։

18 Առավել տարօրինակ է Ղարիբյանի հայտարարությունը, թե իբր Ուռհայեցին «խեղաթյուրել է պատմական ճշմարտությունը», որը մայր հայրենիքից շատ հեռու ապրելու հետևանք է։ Այդ պատճառով «իրենից շատ առաջ կատարված դեպքերի ու դեմքերի հարցում լավատեղյակ չէ» (նշվ. աշխ., էջ 82)։ Սա ակնհայտ թյուրիմացություն է։ Կոստանդնուպոլիսը շատ ավելի հեռու է Հայաստանից, բայց բյուզանդական պատմիչների (օր. Կոստանդին Սիրանածնի) տեղեկությունները Հայաստանի մասին ոչ ոք կասկածի տակ չի առնում, որովհետև նման պարագաներում որոշիչը պատմիչի օգտագործած աղբյուրներն են։ Այդ տեսանկյունից Մատթեոս Ուռհայեցին ամենավստահելի հեղինակներից է, և հատկապես Տաշիր—Զորագետի վերաբերյալ, որովհետև նրա աշխատության աղբյուրներից է XI դարի հեղինակ և Սանահնի վանահայր Դիոսկորոսի աշակերտ Հակոբոս Սանահնեցու «Ժամանակագրությունը», իսկ ինքը Հակոբոսը կյանքի վերջում ապրել է Ուռհայում (տե՛ս Լ. Խաչիկյան, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 22—48)։

ամս Ծ (50) և կամայօժար կրօնաւորի ի վանս Սանահին ամս Ը (8), որով և փոխի մահուամբ»[19]։

«... Ըստ այս վկայության,— գրում է Ղարիբյանը,— նախ. Գուրգենը թագավոր է դարձել հոր մահից հետո, երկրորդ՝ նա թագավորել է հիսուն տարի...»։ Ժամանակագրության հրատարակիչ Վ. Հակոբյանը «Ծ» թվանիշը համարում է գրչասխալ և առաջարկում բնագրում Ծ-ի փոխարեն կարդալ «Ժ» (10)[20]։ Ղարիբյանը համաձայնվում է այդ առաջարկի հետ, «որովհետև գրիչները շատ հեշտությամբ կարող էին Ծ-ն շփոթել Ժ-ի հետ։ Եթե ընդունում ենք, որ առաջարկված ուղղումը ճիշտ է, ապա պարզվում է, որ 972+10=982, իսկ կան փաստեր, որ Գուրգենը թագավորել է մինչև 989 թ. Ներառյալ։ Այսպիսով պարզվում է, որ այս դեպքում էլ Գուրգենը Աշոտ Ողորմածի ժամանակ թագավոր չէր կարող լինել»[21]։ Բայց Ղարիբյանը չի ասում, թե այդ ո՞ր փաստերն են։ Նա միայն վկայակոչում է Ղ. Մովսիսյանին, որի կարծիքով Գուրգենը մահացել է 989 թ.[22]։

Ղարիբյանը գտնում է, որ իբր 989 թ. Գուրգենը ոչ թե մահացել է, այլ հեռացել վանք։ 989 թ. նոյեմբերին մահացել էր հայոց թագավոր Սմբատ II-ը՝ Գուրգենի ավագ եղբայրը, և գահակալել էր մյուս եղբայր Դագիկը (990—1020)։ Ասողիկի ասելով նրանք մեղքեր էին գործել[23] (Սմբատը ամուսնացել էր իր քրոջ դստեր հետ և այլն)։ Եղբայրների մեղքերը քավելու և հոգիները փրկելու նպատակով, ըստ Ղարիբյանի վարկածի, Գուրգենը հեռացավ վանք։ Եվ քանի որ Ասողիկը, պատմելով Դագիկ I-ի գահակալության սկզբի մասին (989) որպես Գուգարքի թագավոր անմիջապես նշում է Գուրգենի հաջորդ Դավիթ Անհողինին, ուրեմն Գուրգենը այդ թվականին արդեն թագավոր չէր։ Ըստ այս դիտողությունների Գուրգենը հեռացել է վանք 989 թ., իսկ մահացել՝ 997-ին (989+8=997)։ Գահակալության սկիզբը պետք է համարել 979 թ.[24]։

Այս եզրակացության հետ դժվար է համաձայնվել։ Իհարկե, XII դարի Անանուն հեղինակի նշած «Ծ» թվանիշը ակնհայտ գրչասխալ է, բայց ծ-ն կարելի էր շփոթել մի այլ տառի հետ. գրավոր աղբյուրներում ունենք դրա փաստացի ապացույցը։ Այսպես, Երուսաղեմի № 1455 ձեռագիրը, գրված XVII դարում, ունի այսպիսի բնագիր՝ «Թագաւորք վերջինք ի վերայ Հայոց, որ կոչին Բագրատունիք, յազգէ Դաւթի»։ Բնագրում Աշոտ Ողորմածի մասին կարդում ենք. «Թագաւորէ Աշոտ ամս ԾԲ... ի սորա աւուրս շինեցաւ Հաղբատ եւ Ժ ամ անցեալ Սանահինն շինեցին»[25]։

Մուշում X դարում գրված ձեռագիրը՝ «Պատմութիւն Ս. Նշանին ս. Աղբերկա», ունի հիշատակարան, որտեղ Սմբատ I-ի մասին ասված է. «եւ

---

19 «Մաեր ժամանակագրություններ. XIII—XVIII դդ.», հատ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501։

20 Նույն տեղում, էջ 503, ծան. 3։

21 Ի. Ղ ա ր ի բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 80—81։

22 Ղ. Մ ո վ ս ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 34—35։

23 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերականաց», ՍՊԲ, 1885, էջ 253—255։

24 Ի. Ղ ա ր ի բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 83—84։

25 Տե՛ս Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Յիշատակարանք հնագրաց, Անթիլիաս, 1951, էջ 87։ Հ. Ո ս կ ի ա ն, Դուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 88։

թագաւորեաց ամս ԾԲ և նահատակեցաւ ի Դվին ի Պարսից»[26]։ Այս ձեռագիրը տալիս է ակնհայտ սխալ թիվ։ Աղբյուրներից մեկ քաջ հայտնի է, որ վերոհիշյալ թագավորները իշխել են ոչ թե 52 (ԾԲ), այլ 24 (ԻԴ) տարի[27]։ Մեր կարծիքով նույնպիսի սխալ է թույլ տվել XII դարի ժամանակագրության հեղինակը. Ծ-ի փոխարեն պետք է լինի Ի (կամ ԻԵ), որովհետև, ինչպես կտեսնենք, Գուրգենը իրոք իշխել է 25 (ԻԵ) տարի։

Անհամոզիչ է Ղարիբյանի բացատրությունը Գուրգենի վանք հեռանալու դրդապատճառի մասին. վերջինս բոլորովին պատասխանատու չէր իր եղբայրների «մեղքերի» համար, Սմբատի ամուսնությունը քրոջ դստեր հետ և մյուս «հանցանքները» չէին կարող ստիպել Տաշիրում իշխող Գուրգենին հրաժարվել թագավորությունից և աշխարհիկ կյանքից։

Ընդունելի չէ և երկրորդ կռվանը։ Ասողիկի մոտ Դավիթ Անհողինի մասին խոսվում է ոչ թե Գագիկ I-ին վերաբերող հատվածում, այլ Գագիկի կին Կատրամիդեի կողմից Անիի մայր տաճարի կառուցումը ավարտելու (1001 թ.) մասին պատմելուց հետո[28]։ Եթե չափանիշը նույն էջում երկու տաճարների հիշատակության հաջորդականությունն է, ապա Ասողիկի տեղեկությունը ոչ թե հաստատում, այլ ժխտում է Ղարիբյանի եզրակացությունը և միաժամանակ՝ Ղ. Մովսիսյանի տեսակետը, որը ավելի վաղ նույն կերպ փորձել էր հիմնավորել 989 թ.[29]։ Ընդսմին, Ղարիբյանին անծանոթ է մնացել հարցին ուղղակիորեն վերաբերող մի կարևոր վկայություն՝ Հաղբատում 991 թ. գրված արձանագրությունը. «Ի Նխ (991) թուականութեանս Սիմեւոն հայր և Տիրանուն երեց շինեցաք զեկեղեցիս փրկութեան Սիմբատա և Գուրգենա։»[30]։ Այս եկեղեցին՝ Հաղբատի Ս. Նշանը, ինչպես և Սանահնի Ամենափրկիչը կառուցվել է Աշոտ Ողորմածի որդիների արևշատության համար։ Սա է Գուրգենին վերաբերող վերջին հիշատակությունը աղբյուրներում և նրա գահակալությանը վերաբերող առայժմ մեզ հայտնի վերջին թվականը։

Այսպիսով, Գուրգենի 10-ամյա գահակալությունը՝ մինչև 989 թ., Ղարիբյանի (և Մովսիսյանի) վկայած աղբյուրների միջոցով չի հաստատվում[31]։

Ղարիբյանը հատուկ ուշադրություն է դարձնում Սմբատ II Տիեզերակալի հրովարտակի վրա, որը կարևոր աղբյուր է Տաշիրի X դարի պատմության համար։ Այն գրվել է 979 թ. Սանահնում Սմբատ II-ի այցի ժամանակ, իսկ բովանդակությունը արտագրվել է վանքի մատյանում։ Հրովարտակում Սմբատը հաղորդում է Սանահնում Ս. Աստվածածին կենտրոնով եկեղեցական վիճակ հիմնելու մասին, որին ենթարկվում էին (կրոնա-վարչական առումով) «Տաշիր երկրի» (Կյուրիկյան թագավորության) բոլոր գավառներն ու գյուղերը[32]։

---

26 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 188։

27 «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հատ. 2, էջ 501։ Ասողիկ, էջ 180։ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 240։ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 175։

28 Ասողիկ, էջ 256։

29 Ղ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 34—35։

30 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 141—142։

31 Ինչ վերաբերում է Ղարիբյանի մատնանշած հեղինակներին (էջ 84), որոնք նույնպես ընդունել են 989 թ., ապա նրանք բոլորը կրկնել են Ղ. Մովսիսյանին, որի աշխատությունը ծառայել է որպես գիմք։

32 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 46—50։

Ժամանակին Ղ. Մովսիսյանը հրովարտակի դրությունը կապել է Գուրգենի թագավորության հետ և եզրակացրել, որ Սմբատի այցի ժամանակ տեղի է ունեցել Տաշիրի «անկախության հանդիսավոր հանդեսը»[33]։ Ղարիբյանը լրիվ համամիտ է այս եզրակացությանը[34]։

Այս տեսակետը և նրա հիմնավորումն ընդունելի չեն։ Մեր երկրորդ հոդվածում ցույց ենք տվել, որ 979 թ. Սմբատի այցը Սանահին ոչ մի կապ չունի վիճակ կազմակերպելու և «Տաշիրի անկախությունը» հռչակելու հետ։ Եկեղեցական վիճակ Տաշիրում կար 979 թ. առաջ, այդ երևում է Սիմեոնի հիշատակարանից. վանքի քարտուղարը թվարկում է այն եկեղեցականներին, որոնք ղեկավարել են տեղական թեմն արդեն 972 թ. և դրանից մի քանի տարի առաջ. «... յեպիսկոպոսութեան մերումս նահանգի գաւառիս Տաշիր Գրիգոր արժանաւոր հաւատապետի, որ և նորա յառաջնորդութեանն են ամք Բ... ևս առաւել յիշելոյ արժանի համարհաջիք զհանգուցեալ... Պաւղիկարպոս որ սկիզբն արար վանիցս շինութեան..., որոյ հանգստեան են ամք Բ. ևս առաւել յիշեսջիք զնորին փոխանորդ զուխտի առաջնորդս զհայրն Գրիգոր մաքուր յոյժ...»[35]։ Պարզվում է, որ 972 թ. Տաշիրի եպիսկոպոսն էր Գրիգորը, որը առաջնորդ էր դարձել 970 թ.՝ փոխարինելով մահացած Պոլիկարպոսին. վերջինս մասնակցել է վանքի հիմնադրմանը։ Ուրեմն Սանահնի վիճակը (թեմը) գոյություն ուներ 979 թ. ավելի վաղ, Պոլիկարպոսի օրոք. և Սմբատ Տիեզերակալը նոր չպետք է ստեղծեր այն։ Տաշիրում վիճակ չէր ստեղծվի, եթե չլիներ այն քաղաքական կազմավորումը, որը կարիք ունենար սեփական հոգևոր կենտրոնի։ Այդ երկուսը անբաժանելի են միմյանցից, թեմը կոչված է ամրապնդելու ֆեոդալ իշխողների քաղաքական իշխանությունը։ Սանահնի և նրան քիչ հետո ավելացած Հաղբատի վանքերը Կյուրիկյանների տոհմական հոգևոր կենտրոններն էին։ Նրանց կառուցումը (առաջին հերթին՝ Սանահնի) անիմաստ կլիներ, եթե Բագրատունիների կրտսեր ճյուղը՝ Կյուրիկյան տոհմը՝ ի դեմս նրա առաջին ներկայացուցիչ Գուրգենի, արդեն Տաշիր-Զորագետի կառավարիչը չլիներ։ Վանքի կառուցումը, այսինքն թեմի կազմակերպումը, ձեռնարկել է արքունիքը, թագուհու՝ Աշոտ III-ի կին Խոսրովանուշի հսկողության ներքո[36], իսկ տեղում միջոցառումները իրականացնում էին Սմբատն ու Գուրգենը և հոգևորականներից՝ Պոլիկարպոսը։

Եկեղեցական թեմի կազմակերպման տարիներն ինքնին մատնանշում են թագավորության առաջ գալու ժամանակը[37]։ Արդ՝ մեզ պետք է պարզել, թե երբ է կառուցվել թեմի աթոռանիստ վանքը, կամ նրա գլխավոր եկեղեցին՝ Սանահնի Ամենափրկիչը։

Ղարիբյանի կարծիքով, վանքի քարտուղար Սիմեոնի վկայությամբ եկեղեցու կառուցումը ավարտվել է 972 թ.։ «Այս կարծիքին է նաև Սանահնի վանքի քաջահմուտ ուսումնասիրող պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, որն ապացուցում է, որ վանքի կառուցումն ավարտվել է 972 թ., բայց բարձրաքանդակի

33 Ղ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 26։

34 Խ. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 85։

35 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 39—40։

36 Նույն տեղում, էջ 38, 57։ «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հատ. 2, էջ 501։

37 Մանրամասն տե՛ս «Լոռվա թագավորության կազմավորման պատմությունից», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1976, № 3։

արձանագրությունը թվագրվում է 980-ական թվականով»[38],— գրում է Ի. Ղարիբյանը։ Նա սխալվում է. ո՛չ Սիմեոնը և ո՛չ էլ պրոֆ. Կ. Ղաֆադարյանը նման միտք չեն արտահայտել։ Ահա Սիմեոնի խոսքերը վանքի մասին. «... ի թուականութեան ՆԻԱ (972)... որ էր վանիցս շինութեան ամք Զ...»[39]։ Այս տողերից պարզվում է, որ 972 թ. վանքի կառուցումից անցել էր 6 տարի, ուրեմն եկեղեցու կառուցումը և միաժամանակ վանքի հիմնադրումը տեղի է ունեցել 966 թ.։ Պրոֆ. Ղաֆադարյանը, բերելով Սիմեոնի հիշատակարանը, վանքի կառուցման մասին գրում է. «Մեզ համար մեծ կարևորություն ունեն հիշատակարանում մեջ բերված թվական տվյալները։ Այդտեղ նշված է, որ հայոց ՆԻԱ (972) վանքի շինության վեցերորդ տարին է, ուրեմն վանքը կառուցվել է 972—6=966»։ Այնուհետև, քննելով պատմիչների՝ հարցին վերաբերող տեղեկությունները, եզրակացնում է, որ ճիշտը պետք է համարել 966 թ.[40]։

Ինչ վերաբերում է արձանագրության ժամանակին, ապա պրոֆ. Ղաֆադարյանը այն թվագրել է X դարի 80-ական թթ.՝ պարզապես հետևելով Գուրգենի իշխանության՝ Ղ. Մովսիսյանի կողմից որոշած թվականներին, որոնք սխալ են, բայց Կ. Ղաֆադարյանի աշխատությունը գրվելու և հրատարակվելու ժամանակ (1957) ընդունված էին պատմագրության մեջ։ Այսպիսով, Սանահնի վանքը հիմնադրվել է 966 թ. և այդ թվականին Ամենափրկիչ եկեղեցու հետ պատրաստ էին բարձրաքանդակները ու արձանագրությունը։ 966-ին Տաշիրի թեմն արդեն գործում էր, այդ փաստը մեզ հիմք է տալիս Գուգարքում Կյուրիկյան թագավորության կազմավորման ժամանակը հաշվել 966-ից։ Ըստ այդմ Կյուրիկյան առաջին թագավոր Գուրգենը գահակալել է առնվազն 25 տարի՝ 966—991 թթ.։

Մեր հոդվածում Տաշիր թեմի կազմավորումը հաշվել ենք 969/970 թ., նկատի ունենալով, որ թեմի առաջին առաջնորդ Պոլիկարպոս եպիսկոպոսը մինչ այդ առաջնորդել է Արշարունիքի Կամրջաձորի վանքում, և այդ վանքի ներկայացուցիչն է եղել Անիի 969 թ. եկեղեցական ժողովում[41]։ Դրանից հետո, ինչպես գրված է հոդվածում, նա տեղափոխվել է Տաշիր[42]։ Եթե ճիշտ է այդ ենթադրությունը, ապա Պոլիկարպոսը Տաշիր պետք է եկած լիներ նույն 969 թ., որովհետև ըստ Սիմեոնի 970 թ. նա արդեն մահացել էր։ Ելնելով դրանից մենք Տաշիրի թեմի և միաժամանակ Կյուրիկյան թագավորության սկիզբը համարեցինք 969/970 թ.։ Բայց ըստ երևույթին մեր նախորդ հաշվումների մեջ վրիպակ կա. Կամրջաձորի «Ս. Նշանի պատմության» հեղինակը նշում է, որ Արշարունիքի եպիսկոպոս Պոլիկարպոսը մինչև կյանքի վերջը եղել է Կամրջաձորի վանքի առաջնորդ և այնտեղ էլ մահացել է[43]։ Պետք է

38 Ի. Ղ ա ր ի ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 81, 86, ծան. 24։

39 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 37—38։

40 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 15, 18, 22, 26։ Հմմտ. О. Халпахчьян, Санаин, М. 1973, էջ 27։ Նույն թվականը նշված է արդեն հիշատակված XII դարի ժամանակագրությունում (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հատ. 2, էջ 501)։ Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է 957—966 թթ. (տե՛ս О. Халпахчьян, Принципы сложения культовых ансамблей Армении. «Архитектурное наследство», 1976, № 24, էջ 129)։

41 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 3, էջ 94։

42 Նույն տեղում։

43 Տե՛ս «Կամրջաձորի Ս. Նշանի պատմութիւն» («Յիշատակարանք ձեռագրաց», էջ 174)։

եղրակացնել, որ Տաշիրի առաջնորդը Պոլիկարպոս անունով մեկ այլ հոգևորական է, որը 969-ից ավելի շուտ գտնվում էր Սանահնում։

IX դարի վերջին — X դարի կեսերին Տաշիր-Զորագետը տոհմական ոստանի մարզերից էր, որտեղ Աշոտ I-ի ժամանակներից նշանակվում են կառավարիչ-վերակացուներ[44]։ Թագավորության կազմավորումով երկրամասը հանձնվեց Բագրատունի կրտսեր ճյուղին, վերակացուներին փոխարինեցին Բագրատունի (Կյուրիկյան) թագավորները։ Վերջիններս դարձան տեղի ֆեոդալ-տերերը, նրանցից առաջինը Գուրգենն էր՝ Աշոտ III-ի որդին։ Գուրգենը իր տիրույթը ստացել էր արքունիքից որպես «Հայրենի իշխանություն»[45]։ Աղբյուրների տվյալներից երևում է, որ այդպես էին կոչվում պայմանական-ժառանգական տիպի հողերը՝ ֆեոդները, ի տարբերություն ժառանգական հողերի՝ «Հայրենի ժառանգության» կամ «Հայրենի տերության»։ «Տաշիր երկրի» կառավարիչ Գուրգենը կրում էր թագավորական տիտղոս, բայց Կյուրիկյանների համար դա լոկ դասային տիտղոս էր և միապետի հոմանիշը չէր։ Այն արտահայտում էր Գուրգենի և նրա հաջորդների արտոնությունը՝ հայոց շահնշահի «Հայրենի խնամի տակ» իրենց տիրույթում ժառանգաբար վարելու վարչական իշխանությունը, բայց պայմանական իրավունքով[46]։ Տաշիրում վասալ թագավորության կազմավորումից հետո էլ հողի գերագույն սեփականատերը մնում էր Բագրատունյաց տոհմի գահերեցը՝ ի դեմս հայոց շահնշահի։

Սմբատ II-ի հրովարտակի բովանդակությունը դրանում կասկած չի թողնում։ Բայց հրովարտակը պետք է ճիշտ հասկանալ և մեկնաբանել։ Ղարիբյանը գրում է, որ եթե Սմբատը իր կամքով այդպես աղատ տնօրինում էր տվյալ տերիտորիաները, ուրեմն դրանք հանդիսանում էին նրա սեփականությունը, իսկ եթե դրանք Գուրգենի թագավորության կազմում լինեին 972-ից, ապա տվյալ ակտով կատարվում էր ֆեոդալական սեփականատիրության իրավունքի ոտնահարում։ Ճիշտ է, Սմբատը շահնշահ էր, բայց նա ոչ մի իրավական ոտնձգություն չէր կարող կատարել ֆեոդալական թագավորությունների այն տերիտորիաների հանդեպ, որոնք տեղական թագավորի սեփականությունն էին[47]։

Նման մեկնաբանումը հետևանք է այն բանի, որ տարբերություն չի արվում Լոռվա և մյուս գավառական թագավորությունների միջև։ Այդպես կարելի է խոսել Վասպուրականի կամ Սյունիքի գահակալների և հայոց շահնշահի փոխհարաբերությունների մասին, բայց ոչ Տաշիր-Զորոփորի։ Արծրունիները կամ Սյունիները իրենց հողերի հայրենատերերն էին, իսկ Կյուրիկյանները՝ ոչ։ Առաջիններն իշխում էին տոհմական մարզերում, որտեղ Բագրատունիները հողային իրավունք երբեք չեն ունեցել։ Իսկ Կյուրիկյաններին բաժին հասավ արքունի ոստանի մի մարզ, որը Աշոտ I-ից սկսած անմիջականորեն ենթարկված էր հայոց թագավորին։

Թագավորության կազմավորումից հետո այդ երկրամասը որոշ ժամա-

---

44 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 140։

45 XII դարի Անանուն հեղինակը Գուրգենի մասին գրում է. «Իսկ ի տեղի իւր կացուցանէ, զէրէց որդի իւր զԴավիթ, որ և նա բարեպաշտութեամբ վայելէ ի Հայրենի իշխանութեանն» (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հատ. 2, էջ 502)։

46 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 3, էջ 90—93։

47 Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 81։

նակ ունեցել է երկու կառավարիչ՝ տեղական թագավոր (Գուրգեն) և գահակից թագաժառանգ (Սմբատ)։ 977-ին ավարտվել է գահակցությունը, Սմբատը դրավել է հայոց գահը, իսկ Գուգարքում իր վարչական ֆունկցիաները հանձնել է եղբորը։ 979 թ. տեղի է ունեցել այդ ակտի իրավական ձևակերպումը, Սմբատը վերահաստատել է եղբոր իրավունքները որպես տեղական ֆեոդալ-թագավորի՝ շնորհել նրան ինվեստիտուրա։ Այդ է եղել նրա Սանահին այցելելու նպատակը։ Այդ իրողությունն են արտացոլում պատմագիր Վարդանը և XII դարի հիշատակարանը[48]։

Ղարիբյանը ճիշտ է նկատել, որ 977-ին վերջացել է Սմբատի իշխանությունը Գուգարքում, բայց նա իրավացի չէ, երբ գտնում է, թե այդ թվականին Սմբատը իր եղբորը նշանակել է միայն տեղական կառավարիչ, որը 979-ին «Գուգարքում հռչակում է առանձին թագավորություն»[49]։ Գուրգենը ոչ մի թագավորություն չի հռչակել։ Նա իր իրավունքները ստացել է արքունիքից, սկզբից ևեթ եղել է «թագավոր»՝ թագակիր կառավարիչ, իսկ թագը եղել է նրա իրավունքների ճանաչումը դերագույն սյուզերենի՝ հայոց թագավորի կողմից տեղում պայմանական իրավունքով իշխելու համար։ Սեփականատիրական իրավունքի տեսակետից Կյուրիկյան թագավորությունը, փաստորեն, եղել է պայմանական հողատիրության տարբերակներից մեկը։

Թագակիր կառավարիչների՝ ֆեոդատեր թագավորների ինստիտուտի ստեղծումը Աշոտ III-ի օրոք Բագրատունյաց արքունիքի կողմից իրագործվող վերափոխումների արդյունք էր։ Այն մի միջոց էր կատարելագործելու պետական վարչական ապարատը, երկրի մարզերը, հատկապես ծայրամասերը կենտրոնի հետ ամուր կապելու և նրանց պաշտպանությունը ապահովելու համար։ Նշված ինստիտուտը վասալ գահակալներին կապում էր արքունիքի հետ, ապահովում նրանց կախումը դերագույն սյուզերենից՝ հայոց թագավորից (շահնշահից)։

Տոհմական ոստանի հեռավոր երկրամասում շահնշահի ազգակցին դարձնելով թագավոր՝ արքունիքը սահմանամերձ գավառներում ստեղծեց նոր ֆեոդալական կազմավորում, որը կատարում էր Արշակունյաց շրջանի բդեշխության դերը X—XI դդ. կազմավորումը կոչվում էր թագավորություն։

ВРЕМЯ И ПРЕДПОСЫЛКИ ОБРАЗОВАНИЯ КЮРИКИДСКОГО ЦАРСТВА

Кандидат историч. наук Р. П. МАТЕВОСЯН

(Резюме)

В одной из своих статей («Историко-филологический журнал», 1968, № 3) мы предложили датировать образование Кюрикидского (Лорийского) царства 972 годом. В «Вестнике Ереванского университета» (1977, № 1) была напечатана статья И. Гарибяна, который не соглашается с нашей датировкой и выдвигает свою—979 г. Вновь обращаясь к этому вопросу и привлекая новые факты, мы относим образование Кюрикидского царства к 966 г. Одновременно в статье объясняются предпосылки его образования (охрана северных границ Багратидского царства и др.).

48 Մանրամասն տե՛ս «Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 1։

49 Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 79։